

ԳՐԱԿԱՆ

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ ՓՈՐՉ ՄԸ ԲՆԱԳՐԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻ

Դ Ր Ժ Ե Լ

Խումբ մը կննհո՛ւ՝ բուռ մը կայծակ՝
Դըժոխք մ'անէծք խոցեց հոգեակս:

Ես ուզեցի պաշտել ըզնէ,
Միրել ժպիտքն՝ փրթի՛թք անհուն,
Միրել աստղերն սեւ աչերուն
Եւ այն խոկումն որ մըքագնէ
Պայծառ ֆակատը՝ այն ամպն է
Որ կ'ըշպարէ դէմքը լուսնոյն:

Գիշեր մը սուգ՝ անդունդ մ'հառաչ
Յուզեց ներս հոգին ու լանջ:

Ես ուզեցի միշտ ֆովն ըլլալ,
Մըտիկ ընել թնդիւն սրտին,
Շնչել՝ խըմել ներս հոգին,
Եւ շօշափել լոկ ճիւղափայլ
Ծոծորակին վըրայ ծալ ծալ
Թափող վարսից ալեակք ծըփին:

Ովկէան մը տրտունջ լսեցի,
«Զ'իս կը նեղե՛ս — հծծեց ինծի:

Ես ուզեցի քննար մ'ըլլալ
Ներս ճեղքին տակ հեւացող,
Ներս հոգւոյն խորն հիացող
Թեթեւ պատկեր մ'ըլլալ շարժեալ,
Մոռնալ գիս, լոկ ըզնէ խոկալ՝
Կ'վառէ երագ մ'որուն մէկ շող:

Ամպրոպ մը սաստ ցնցեց հոգիս
Գոչեց — սիրել չ'ես կրնար գ'իս:»

Դ Ր Ժ Ե Լ

Փունջ մը կննին՝ ⁽¹⁾ բոյլ մը կայծակ՝
Դըժոխս մ'անէծք խոցեց հոգեակս:

Եւ ուզեցի պաշտել ըզնէ,
Սիրել ժպիտին՝ ⁽²⁾ փրթի՛թք անհուն,
Սիրել աստղերն սեւ աչերուն
Եւ այն խոկումն՝ որ մըքագնէ
Պայծառ փակատը՝ ⁽³⁾ այն ամպն է
Որ կ'ըշպարէ՝ ⁽⁴⁾ դէմքը լուսնոյն:

Գիշեր մը սուգ՝ անդունդ մ'հառաչ՝
Յուզեց ներս հոգին ու լանջ:

Ես ուզեցի միշտ քովն ըլլալ,
Մըտիկ ընել քնդին ⁽⁵⁾ սրտին,
Շնչել՝ խըմել ⁽⁶⁾ ներս հոգին,
Եւ շօշափել լոկ ձիւնափայլ
Ծոծորակին վըրայ ծալ ծալ
Թափող վարսից ալեակ ⁽⁷⁾ ծըփին:

Ովկէան մը տրտունջ ⁽⁸⁾ լսեցի,
«Զ'իս կը նեղե՛ս — հծծեց ⁽⁹⁾ ինծի:

Ես ուզեցի քննար մ'ըլլալ
Ներս ձեռքին տակ հեւացող,
Ներս հոգւոյն խորն հիացող
Թեթեւ պատկեր մ'ըլլալ շարժեալ,
Մռնալ գիւ, լոկ ըզնէ՛ խոկալ՝
Կ'վառէ երազ մ'որուն մէկ շող:

Ամպրոպ մը սաստ ցնցեց ⁽¹⁰⁾ հոգիս,
Գոչեց — սիրել չ'ես կրնար գ'իս:»

(1) Էֆս. *կննհին*: (2) Էֆս. *ժըպիտին*: (3) Էֆս. *փակատն*: (4) Էֆս. *կը շպարէ*: (5) Էֆս. *թընդին*: (6) Էֆս. *խմել*: (7) Էֆս. *ալեակքն*: (8) Էֆս. *տըրտունջ*: (9) Էֆս. *հծծեց*:
(10) Էֆս. *ցընցեց*:

Ի գո՛ւր սիրտըս մըխաց առջին՝
 Խնկարկելու սիրտն անապատ.
 Յուցի իրեն ճակատս գունատ՝
 Կո՛րծըս գոգած՝ մարն իմ աչքին,
 Ի գո՛ւր շուրթերս դողդոջեցին,
 Զինքը սիրելիս հծծեցին յայտ:

Նէ հեռացաւ ինձնէ, ըսաւ,
 — Բա՛ւ սիրեցի քեզ, մնաս բարեա՛ւ:»

Որոտացին խոկմանցս ամպեր,
 Կայծակնահար ըրին հոգիս,
 Մոխիր դարձան երազներս յ'իս,
 Հակատագիրս խնձղաց ի վեր,
 Խորշ մը կար որ գ'իս կը ծաղրէր,
 Այն լուռ փոսն էր գերեզմանիս...:
 Խոււր մը կնկիո՛ւ բուռ մը կայծակ
 Դժոխք մ'անէծք խոցեց հոգեակս...:

1871

Լ Ճ Ա Կ

Ինչո՞ւ ապշած եմ, Լընա՛կ,
 Ու չ'են խայտար քու ալեակք,
 Մի՞թէ հայլույդ մէջ անձկաւ
 Գեղուհի՞ մը նայեցաւ:

Եւ կամ մի՞թէ կըզմայլի՞ն
 Ալեակդ երկնի կապոյտին,
 Եւ այն ամպոց լուսափթիթ՝
 Որք նըմանին փրփուրիդ:

Մեկամաղձուտ Լընա՛կ իմ,
 Քեզ հետ ըլլա՛նք մըտերիմ,
 Սիրեմ քեզի պէս ես ալ
 Գրաւիլ՝ լըռել՝ ու խոկալ:

Որքան ունիս դու ալի՛
 Հակատս այնքան խոկ ունի,
 Որքան ունիս դու փրփուր՝
 Սիրտս այնքան խոց ունի քիւր:

Ի գո՛ւր սիրտըս մըխաց առջին՝
 Խնկարկելու⁽¹¹⁾ սիրտն անապատ.
 Յուցի իրեն մակատս գունատ՝
 Կուրծըս գոգած՝ մարմն⁽¹²⁾ իմ աչքին,
 Ի գո՛ւր շուրթերս դողդոջեցին,
 Զ'ինքն սիրելու հոծեցին⁽¹³⁾ յայտ:

Նէ հեռացաւ ինձմէ,⁽¹⁴⁾ ըսաւ,
 — Բա՛ւ սիրեցի քեզ, մնաս բարեա՛ւ:»

Որոտացին խոկմանցս ամպեր,
 Կայծակնահար ըրին հոգիս,
 Մոխիր դարձան երազներս յ'իս,
 Հակատագիրս խնծղաց ի վեր,
 Խորշ մը կար որ գ'իս չը ծաղրէր,
 Այն լուռ փո՛սն էր գերեզմանիս...:

Փունջ մը կնկիւ՝⁽¹⁵⁾ բոյլ մը կայծակ՝
 Դժոխս⁽¹⁶⁾ մ'անէծք խոցեց հոգեակս...:

1871

(11) էջս. *Խնկարկելու*: (12) էջս. *մարմն*: (13) էջս. *հոծեցին*: (14) էջս. *բնակ*:

(15) էջս. *կնկիւ*: (16) էջս. *Դժոխք*:

Լ Ճ Ա Կ

Ինչո՞ւ ապշած եմ, լըճա՛կ,
 Ու չ'են խայտար քու ալեակք,
 Միթէ հայլույդ մէջ անձկաւ
 Գեղունի՞ք մը նայեցաւ:

Եւ կամ միթէ կըզմայլի՞ր⁽¹⁾
 Ալեակքդ⁽²⁾ երկնի կապոյտին,
 Եւ այն ամպոց լուսափթիթ՝
 Որք նըմանին փրփուրփիդ:⁽³⁾

Մեյամազձոտ լըճա՛կդ⁽⁴⁾ իմ,
 Քեզ հետ ըլլա՛նք մըտերիմ,
 Սիրեմ քեզի պէս ես ալ
 Գրաւվիլ՝⁽⁵⁾ լըճի ու խոկալ:

Որքան ունիս դու ալի՛
 Հակատս այնքան խոկ ունի,
 Որքան ունիս դու փրփուր՝⁽⁶⁾
 Սիրտս այնքան խոց ունի բիր:

(1) էջս. *կ'զմայլի՞ր*: (2) էջս. *Ալեակք*: (3) էջս. *փրփուրփիդ*: (4) էջս. *Լճակ*: (5)

էջս. *Գրաւվիլ*: (6) էջս. *փրփուր*:

Այլ եթէ գոգդ ալ թափին
 Բոլլին աստեղաց երկնին,
 Նըմանիլ չ'ես կրնար դուն
 Հոգւոյս՝ որ է բոց անհո՛ւն:

Հոս աստղերը չ'են մեռնիր,
 Ծաղիկներն հոտ չ'են թռումիր,
 Ամպերը չ'են թրջեր հող,
 Երբ խաղաղ է՛ք դու եւ օդ:

Լընա՛կ, դու ես թագուհիս,
 Զի թ'հովէ մ'ալ խորշումիս,
 Դարձեալ խորքիդ մէջ խռով
 Զ'իս կը պահես դողդալով:

Շատերը գիս մերժեցին,
 «Բընար մ'ունի սոսկ — ըսին.
 Մին՝ «դողդոջ է, գոյն չ'ունի—
 Միւսն ալ ըսաւ — կը մեռնի՛»:

Ոչ ոք ըսաւ — հէ՛ք տըղայ,
 Արդեօք ինչո՞ւ կը մըխայ,
 Թերեւս ըլլայ գեղանի
 Թէ որ սիրեմ, չը մեռնի:»

Ոչ ոք ըսաւ — սա տըղին
 Պատռե՛նք սիրտը տըտմագին,
 Նայինք ինչե՛ր գրուած կան...»
 — Հոն հրդեհ կայ, ո՛չ մատեան:

Հոն կայ մոխի՛ր... յիշատակ...
 Ալեակի՛դ յուզե՛նք թող, Լընակ,
 Զի քու խորքիդ մէջ անձկաւ
 Յուսահատ մը մայեցաւ...:

Այլ եթէ գոգդ ալ թափին
Բոյլին աստեղաց երկնփին,⁽⁷⁾
Նըմանիլ չ'ես կրնար⁽⁸⁾ դուն
Հոգւոյս՝ որ է բոց անհո՛ւն:

Հոդ աստղերը չ'են մեռնիր,
Ծաղիկներն հոդ չ'են թռումիր,
Ամպերը չ'են թրջեր⁽⁹⁾ հոդ,
Երբ խաղաղ է՜ դու եւ օդ:

Լընա՛կ, դու ես թագուհիս,
Զի թ'հովէ մ'ալ խորշումիս,
Դարձեալ խորքիդ մէջ խռով
Զ'իս կը պահես դողդալով:

Շատերը գ'իս մերժեցին,
«Քրնար մ'ունի սոսկ — ըսին.
Մին՝ «դողդոջ է, գոյն չ'ունի—
Միւսն ալ ըսաւ — կը մեռնի՛»:

Ոչ ոք ըսաւ — հէ՛ղ տըզայ,
Արդեօք ինչո՞ւ կը մըխայ,
Թերեւս ըլլայ գեղանի,
Թէ որ սիրեմ, չը մեռնի:»

Ոչ ոք ըսաւ — սա տըզին
Պատռե՛նք սիրտը տրտմագին,⁽¹⁰⁾
Նայինք ինչե՛ր գրուած կան...»
— Հոն հրդեհ կայ, ո՛չ մատեան:

Հոն կայ մոխի՛ր... յիշատակ...
Ալեակէդ յուզի՛ն⁽¹¹⁾ թոզ, լընա՛կ,
Զի քու խորքիդ մէջ անձկաւ
Յուսահատ մը նայեցաւ...:

1871

(7) Էճա. *երկընքին*: (8) Էճա. *կըրնար*: (9) Էճա. *թըրջեր*: (10) Էճա. *տըրտմագին*:

(11) Էճա. *յուզէն*:

ԹՐՔՈՒՅԻՆ

Երեկոյ է. բոցավառ է հորիզոն,
Կառք մը կ'անցնի դագաղի պէս յամբընքաց,
Գեղուհի մը ընկողմանած տրոփէ հոն,
Վերջալոյսի աղջիկ մ'է սա, ո'վ Աստուած.

Եթէ նայի,

Կ'ըսես - հի'մա կը մարի:»

Մեղրամով անդրիանդի մ'է հանգոյն,
Ի՛նչ դալկահար ... կարծես հաշաղը վառէ
Պատան մ'է նուրբ ներս վարդիկը դժգոյն.
Աստուած ըզնէ գոյգ մ' աչերովն կը վառէ.

Եթէ ժպտի,

Կ'ըսես - ո՛հ, հի'մա կ'անցնի:»

Նայիլ կ'ուզէ, բայց աւելի կ'ընւաղի,
Սիրտը խունկի պէս կը մըխա՛յ սիրավառ,
Նէ շողերու՝ բոյրերու է թագուհի,
Խոնջ թիթեռնիկ մ'որ կը խնդրէ ծաղկէ թառ.

Եթէ շարժի,

Կ'ըսես - հի'մա կը թռչի:»

Լանջն է յուզեալ Ովկէանի մը նըման.
Կ'ուզէ սիրե՛լ ... համբոյրի մ'հետ նուաղիլ,
Մաշիլ, խամբիլ, խոնջած ընկնիլ գերեզման,
Քամեւ սիրոյ կրակէ բաժկին հուսկ կաթիլ.

Եթէ շիկնի,

Կ'ըսես - հի'մա կը թռնկի:»

Սրտի մեղո՛ւ, ինչպէս կոչեց Լամարթին՝
Որուն ծըծած ծաղիկը՝ սիրտ, մեղրն է սէր,
Ես կոչեմ զնէ կո՛յս՝ որուն սիրտն է երկին
Անհուն սիրոյ որ հորիզոն չ'ունի դեռ.

Եթէ խօսի,

Կ'ըսես - հի'մա կը հատնի:»

Նէ կը վառի, մի՛շտ կը վառի, չը հատնիր
Տընանկ կընոջ տաճարն վառած ճրագին պէս,
Աստղերու նման գիշեր սիրէ՝ փողփողիլ,
Կրակ մ'է փրթած կողէն սիրոյ բոցագէս...

Թէ իսկ մեռնի,

Կ'ըսես - հի'մա կը ծնի:»

Թ Ր Ք Ո Ւ Յ Ի Ն⁽¹⁾

Երեկոյ է. բոցավառ է հորիզոն.
Կառք մը կ'անցնի դագաղի պէս յամբընթաց,
Գեղուհի մը ընկողմանած տրոփէ հոն,
Վերջալոյսի աղջիկ⁽²⁾ մ'է սա, ո'վ Աստուած.
Եթէ նայի',
Կ'ըսես - հի'մայ կը մարի:»

Մեղրամովէ անդրիանդի մ'է հանգոյն.
Ի'նչ դալկահար... կարծես հաջաղը վառէ
Պատան մ'է նուրբ ներա վարդիցը դժգոյն.⁽³⁾
Աստուած ըզմէ գոյգ մ'աչերովն կը վառէ.
Եթէ ժպտի',⁽⁴⁾
Կ'ըսես - ո'հ, հի'մայ կ'անցնի:»

Նայիլ կ'ուզէ, բայց ա'ւելի կ'ներւադի,⁽⁵⁾
Սիրտը խունկի պէս կը մըխա'յ⁽⁶⁾ սիրավառ,
Նէ շողերու՝ բոյրերու է քագուհի,
Խոնջ թիթեռնիկ մ'որ կը խնդրէ ծաղկէ քառ.
Եթէ շարժի',
Կ'ըսես - հի'մայ կը թռչի:»⁽⁷⁾

Լանջն է յուզեալ Ովկէանի մը նըման.
Կ'ուզէ սիրե'լ... համբոյրի մ'հետ նըւադիլ,⁽⁸⁾
Մաշիլ, խամրիլ, խոնջած ընկնիլ գերեզման,
Քամեւ սիրոյ կրակէ բաժկին հուսկ կաթիլ.
Եթէ շիկնի',
Կ'ըսես - հի'մայ կը բռնկի:»

Սրտի⁽⁹⁾ մեղու'ւ, ինչպէս կոչեց Լամարթին՝
Որուն ծըծած ծաղիկը՝⁽¹⁰⁾ սիրտ, մեղրն է սէր,
Ես կոչեմ⁽¹¹⁾ գնէ կո'յս՝ որուն սիրտն է երկին
Անհուն սիրոյ որ հորիզոն չ'ունի դեռ.
Եթէ խօսի',
Կ'ըսես - հի'մայ կը հատնի:»

Նէ կը վառի, մի'շտ կը վառի, չը հատնի
Տընանկ կրնոջ տառաքն վառած հրագին պէս,
Աստղերու նման գիշեր սիրէ՝ փողփողիլ.
Կրակ մ'է փրթած կողէն սիրոյ բոցագէս...
Թէ իսկ⁽¹²⁾ մեռնի',
Կ'ըսես - հի'մայ կը ծընի:»⁽¹³⁾

1871

(1) Է. Կը պակսի վերնագիրը: Հաւանաբար արդիւմէ՝ համարեալ գրաւման քանակը:
նշանակութեամբ: (2) Է. Կը. աղջիկ: (3) Է. Կը. առեւտրի: (4) Է. Կը. ժպտի: (5) Է. Կը. հըւաղի:
(6) Է. Կը. կը մ'ախ'յ: (7) Է. Կը. կը թռչի: (8) Է. Կը. նուազի: (9) Է. Կը. Սրտի: (10) Է. Կը.
ծաղիկը: (11) Է. Կը. կոչեմ: (12) Է. Կը. իսկ թէ: (13) Է. Կը. ծնի:»

ՆԵՐԱ ՅԵՏ

Համբո՛յր մ'առի ներանէ,
Համբո՛յր մ'անհուն գորովի,
Երբ կարմիր շող մարէին
Հորիզոնին վերելի:

Ձեռքս տարաւ կուրծին՝ հոն
Սիրոյ երկին մ'որոտար,
Թօշնեցայ գիրկն ես իբրեւ
Համբոյր մ'անհուն դալկահար:

Նէ գ'իս իր քով նըստեցուց
Գորգի վըրայ դալարեայ,
Հուսկ ճանաչ մը պլպլար
Ներս դիմացը վըրայ:

Թոթովեցի... դողացի...
Առի համբոյր անհամար,
«Խօսի՛նք» ըսաւ — ո՛հ, խօսի՛լ,
Հատնիլ է լոկ ինձ համար:

Աչերու բոցն երբ մարի,
Դադրի տըրտիմ երբ սրտին,
Լոկ այն ատեն հարկ է որ
Անգոր շուրթերն խօսին:

Հուր հորիզոնն մարեցաւ,
Երկինքն աստղեր փթթեցան
Համբոյր մ'առի դարձեալ ես
Յ'անուն աստեղց գիշերուան:

Նէ թռուց որ վարսքն ազատ
Սիւզը դէպ յ'իս բերելով
Միշտ հովանի է բըռնկած
Ճակատս գով բոյրերով:

Ո՛հ, այն ժամը ոսկեգօծ
Անշուշտ սահած՝ թրոած է
Ճակատագրին անողորմ
Սեւ ձեռքերէն երկաթէ:

ՆԵՐԱ ՀԵՏ

Համբո՛յր մ'առի ներանէ,
Համբո՛յր մ'անհուն գորովի,
Երբ կարմիր շոգ մարէին
Հորիզոնին վերելի:

Ձեռքըս տաքաւ կուրծին՝ հոն
Սիրոյ երկին մ'որոտար.
Թօշնեցայ գիրկն ես իբրեւ
Համբոյր մ'անհուն՝ դալկահար:

Նէ գ'իս իր քով նըստեցուց
Գորգի վըրայ դալարեայ.
Հուսկ մանանչ մը կ'ալալար⁽¹⁾
Ներս գիմացը վըրայ:

Թոթովեցի... դռագցի...
Առի համբոյր անհամար.
«Խօսի՛նք» ըսաւ — ո՛հ, խօսի՛լ,
Հատնիլ է լոկ ինձ համար:

Աչերու բոցն երբ մարի,
Դադրի տըրոփն⁽²⁾ երբ սրտին,
Լոկ այն աստեմ հարկ է որ
Անգոր շուրթերը խօսին:

Հուր հորիզոնն մարեցաւ,
Երկինքն աստղեր փթեցան,
Համբոյր մ'առի դարձեալ ես
Յ'անուն աստեղց ցիրեցան:⁽³⁾

Նէ թողուց որ վարսքն ազատ
Սիւզը դէպ յ'իս բերելով
Միշտ հովանիէ բըռնկած
Հակատըս⁽⁴⁾ գով բոյրերով:

Ո՛հ, այս ժամը ռսկեգօծ
Անշուշտ սահած՝ թըռած է
Հակատագրին անդորմ
Սեւ ձեռքերէն երկաթէ:

(1) էջս. ալալար: (2) էջս. տրոփն: (3) էջս. ցիր եւ ցան: (4) էջս. հակատս:

Մեր համբոյրներն պահեցին
Տերեւները խարշափմամբ,
Եւ շողերու տրին շուֆ
Աստղերն երկնից այն անամպ:

Ձեռք վերցուցինք աստղերուն,
Սէր ուխտեցինք իրարու,
Դողդըղացին աստղերն ալ
Մեր երդումէն ահարկու:

Լըսեց երկինք մեր ջերմ ուխտ,
Աստղեր սրսկեց ի գորով,
Բնութիւնն եղաւ պըսակիչ,
Մեզ պըսակեց աստղերով...:

1871

(Մերձ ի մահ գրուած)

Տ Ր Տ Ո Ւ Ն Ձ Ք

Է՛հ, մընաք բարով, Աստուած եւ արեւ՝
Որ կը պըլպըլաք իմ հոգւոյս վերեւ...:
Աստղ մ'ալ եւ կ'երթամ յաւելուլ երկնից,
Աստղերն ի՞նչ են որ՝ եթէ ո՛չ անբիծ
Եւ թշուառ հոգւոց անէծք ողբագին՝
Որք թըռին այրել ճակատն երկնիքին.
Այլ այն Աստուծոյն՝ շանթերո՛ւ արմատ՝
Յաւելուն գէնքերն ու զարդերն հըրատ...:
Այլ, ո՛հ, ի՞նչ կ'ըսեմ... շանթահարէ գ'իս,
Աստուած, խոկն հըսկայ փշրէ հիւլէիս՝
Որ ժպըրհի ձգտել՝ սուգիլ խորն երկնի,
Ելնել աստղերաւ սանդուխտն անալի...:
Ողջո՛յն քեզ, Աստուած դողդոջ էակին՝
Շողին՝ փըթիթին՝ ալւոյն ու վանքին,
Դու որ ճակտիս վարդն եւ բոցն աչերուս
Խըլեցիր թրթռումս շրթանց՝ թռիչն հոգւոյս,
Ամպ տըւիր աչացս, թեւ տըւիր սրտիս,
Ըսիր մահուան դուռն ինձ պիտի ժպտիս,
Անշուշտ ինձ կեանք մը կազմած եւ ետքի,
Կեանք մ'անհուն շողի՝ բոյրի՝ աղօթքի.

Մեր համբույրներն պահեցին
Տերեւները⁽⁵⁾ խառնափամփ,
Եւ շողերու տուին շուֆ
Աստղերն երկնից այն անամպ:

Ձեռք վերցուցինք աստղերուն,
Սէր ուխտեցինք իրարու,
Դողդըղացին աստղերն ալ
Մեր հրդումէն ահարկաւ:

Լըսեց երկինք մեր ջերմ ուխտ,
Աստղեր սրսկեց ի գորով,
Բնութիւնն⁽⁶⁾ եղաւ պըսակիչ,⁽⁷⁾
Մեզ պըսակեց աստղերով...:

1871

(5) ԷՖՍ. Տերեւներն: (6) ԷՖՍ. Բնութիւնն: (7) ԷՖՍ. պսակիչ:

Տ Ր Տ Ո Ւ Ն Ջ Ք

Է՛հ,⁽¹⁾ մընաք բարով, Աստուած եւ արեւ՝
Որ կը պըլպըլաք իմ հոգւոյս վերեւ...
Աստղ մ'ալ եւ կ'երթամ յաւելուլ երկնից,
Աստղերն ի՞նչ են որ՝ եթէ ո՛չ անբիծ
Եւ թշուառ հոգւոց⁽²⁾ անէծք ողբագին՝
Որք թըռին այրել ֆակատն երկնիքին.
Այլ այն Աստուծոյն՝ շանթերո՛ւ արմատ՝
Յաւելուն գէնքերն ու զարդերն հըրատ...:
Այլ, ո՛հ, ի՞նչ⁽³⁾ կ'ըսեմ... շանթահարէ գ'իտ,
Աստուած, խոկն հըսկայ⁽⁴⁾ փշրէ հիւլէիտ՝
Որ ժպըրեի⁽⁵⁾ ձգտիլ՝ սուգիլ խորն երկնի,
Ելնել աստղերու սանդուխտն ահալի...:⁽⁶⁾
Ողջո՛յն քեզ, Աստուած գողգոջ էակին՝
Շողին՝ փըթիթին՝ ալւոյն ու վանկին,
Դու որ ֆակտիս վարդն եւ⁽⁷⁾ բոցն աշերտա
հըլեցիր թրթռումս շրթանց՝ թռիչն հոգւոյս,
Ամպ տըւիր աշացս, հեւք տըւիր արտիս,⁽⁸⁾
Ըսիր մահուան դուռն ինձ պիտի ժպտիս,⁽⁹⁾
Անշուշտ ինձ կեանք մը կազմած⁽¹⁰⁾ եւ ետքի,
Կեանք մ'անհուն⁽¹¹⁾ շողի՝ բոյրի՝ աղօթքի.

(1) ԷՖՍ. Է՛: (2) ԷՖՍ. Թշուառ ողւոց: (3) ԷՖՍ. Ի՛նչ: (4) ԷՖՍ. Հսկայ: (5) ԷՖՍ. ժպըրէի: (6) ԷՖՍ. ահալի...: (7) ԷՖՍ. ու: (8) ԷՖՍ. արտիս: (9) ԷՖՍ. ժպտիս: (10) ԷՖՍ. պաշտած: (11) ԷՖՍ. մը անհուն:

Իսկ թէ կորնչի պիտի իմ հուսկ շունչ
 Հոս մառախուղի մէջ համր՝ անշըշունչ,
 Այժմէն թո՛ղ որ շանթ մ'ըլլամ դալկահար՝
 Պիլըւիմ անուանդ մորնջեմ անդադար,
 Թող անէծք մ'ըլլամ քու կողքդ խրրիմ,
 Թող յորջորջեմ քեզ «Աստուած ոխերիմ»:

Ո՛հ, կը դողդոջեմ, տոգոյն եմ տոգոյն,
 Փըրփըրի ներսըս դըժոխքի մ'հանգոյն...:
 Հառաչ մ'եմ հեծող նոներու մէջ սեւ,
 Թափելու մօտ չոր աշնան մէկ տերեւ...:
 Ո՛հ, կայծ տըւէ՛ք ինձ, կայծ տըւէ՛ք, ապրի՛մ...
 Ի՛նչ, երազէ վերջ գրկել ցուրտ շիրի՛մ...
 Այս ֆակատագիրն ի՛նչ սեւ է, Աստուած...
 Արդեօք դամբանի մրուրո՞վ է գծուած...
 Ո՛հ, տըւէ՛ք հոգւոյս կրակի մի կաթիլ,
 Սիրել կ'ուզեմ դեռ լ'ապրիլ ու ապրիլ՝
 Երկնքի աստղե՛ր, հոգւոյս մէջ ընկէ՛ք,
 Կայծ տըւէ՛ք՝ կեա՛նք՝ ձեր սիրահարին հէք.
 Գարունն ո՛չ մէկ վարդ ֆակտիս դալկահար՝
 Ո՛չ երկնի շողերն ժըպիտ մ'ինձ չ'են տար,
 Իիշերն միշտ դագաղս, աստղերը ջահեր,
 Լուսինն յար կուլայ խուզարկէ վրէժեր:
 Կ'ըլլան մարդիկ որ լացող մը չ'ունին,
 Անոր համար նա դըրաւ այդ լուսին.
 Եւ մահամերձն ալ կ'ուզէ երկու բան,
 Նախ կեա՛նքը, վերջը՝ լացող մ' իր վըրան:

Ի գո՛ւր գըրեցին աստղերն ինձի «սէ՛ր»,
 Եւ ի գո՛ւր ուսուց բուրբուլն ինձ «սիրել»,
 Ի գո՛ւր սիւզեր «սէ՛ր» ինձ ներշնչեցին,
 Եւ զիս նորատի ցուցուց ջինջ ալին,
 Ի գո՛ւր թաւուտներ լընեցին իմ շուրջ,
 Գաղտնապահ տերեւէ չ'առին երբէ՛ք շունչ,
 Որ չը խրոսվին երազքնս վըսեմ,
 Թոյլ տըւին որ միշտ ըզնէ երագեմ,
 Եւ ի գո՛ւր ծաղկունք՝ փըթիթնե՛ր գարնամ՝
 Միշտ խնկարկեցին խոկմանցնս խորան...
 Ո՛հ, նոքա ամենքը զիս ծաղրե՛ր են...
Աստուծոյ ծաղրն է Աշխարհ ալ արդէն...

1871

Իսկ թե՛ կորնչի պիտի իմ հուսկ շունչ
 Հոս մառախուղի մէջ համր՝ անշըշունչ,⁽¹²⁾
 Այժմէն թո՛ղ որ շանթ մ'ըլլամ դալկահար՝
 Պլլըւիմ⁽¹³⁾ անուանդ մոռնչեմ⁽¹⁴⁾ անդադար,
 Թող անէծք մ'ըլլամ քու⁽¹⁵⁾ կողքդ խրքիմ,
 Թող յորջորջեմ քեզ «Աստուած յիսերիմ»:

Ո՛հ, կը դողդոջեմ, դժգոյն եմ դժգո՛յն,
 Փըրփըրի ներսըս դըժոխսի⁽¹⁶⁾ մ'հանգոյն...:
 Հառաչ մ'եմ հեծող նոնքրու մէջ սեւ,
 Թափելու մօտ չոր աշնան մէկ տերեւ...:
 Ո՛հ, կայծ տըւէ՛ք ինձ, կայծ տըւէ՛ք, ապրի՛մ...
 Ի՛նչ, երագէ վերջ գրկել⁽¹⁷⁾ ցուրտ շիրի՛մ...
 Այս ճակատագիրն⁽¹⁸⁾ ի՛նչ սեւ է, Աստուած,
 Արդեօք դամբանի մրուրո՞վ է գծուած...:⁽¹⁹⁾
 Ո՛հ, տըւէ՛ք հոգւոյս կրակի մի կաթիլ,
 Սիրել կ'ուզեմ դեռ լ'ապրիլ ու ապրիլ.
 Երկնի աստղե՛ր, հոգւոյս մէջ ընկէ՛ք,
 Կայծ տըւէ՛ք՝ կեա՛նք՝ ձեր սիրահարին հէ՛ք:
 Գարունն ո՛չ մէկ վարդ ճակտիս դալկահար՝
 Ո՛չ երկնի շողերն ժըպիտ մ'ի՛նձ չ'են տար.
 Գիշերն միշտ դագաղս, աստղերը քահեր,
 Լուսինն յար կուլայ, խուզարկէ վըհեր:
 Կ'ըլլան մարդիկ որ լացող մը չ'ունին,
 Անոր համար Նա⁽²⁰⁾ դըրաւ այդ լուսին.
 Եւ մահամերձն ալ կ'ուզէ երկու բան,
 Նախ կեա՛նքը, վերջը՝ լացող մ'ի՛ր վըրան:⁽²¹⁾

Ի գո՛ւր գըրեցին⁽²²⁾ աստղերն ինծի «սէ՛ր»,
 Եւ ի գո՛ւր ուսուց⁽²³⁾ բուրբուրն ինձ «սիրել»,
 Ի գո՛ւր սիւգեր «սէ՛ր» ինձ ներշնչեցին,
 Եւ գիս նորատի ցուցուց ջինջ ալին,
 Ի գո՛ւր թաւուտներն լըռեցին իմ շուրջ,
 Գաղտնապահ տերեւէ չ'առին երբէ՛ք շունչ,
 Որ չը խրոտվին երագքըս վըսեմ,⁽²⁴⁾
 Թո՛ղ տըւին որ միշտ ըզնէ երագեմ,
 Եւ ի գո՛ւր ծաղկունք՝ փըթիթնե՛ր գարնան՝
 Միշտ խնկարկեցին խոկմանցըս խորան...
 Ո՛հ, նոքա ամենքը գ'իս ծաղրեր են...
 Աստուծո՛յ ծաղրն է Աշխարհ⁽²⁵⁾ ալ արդէն...:

1871

(12) Էֆս. անշըշունչ: (13) Էֆս. Պլլուիմ: (14) Էֆս. մոռնչեմ: (15) Էֆս. ու: (16) Էֆս. դըժոխսի: (17) Էֆս. գըրկել: (18) Էֆս. ճակատագիր: (19) Էֆս. գըծուած: (20) Էֆս. Անոր համար է որ նա: (21) Էֆս. վրան: (22) Էֆս. գըրեցին: (23) Էֆս. ուսուց: (24) Էֆս. վսեմ: (25) Էֆս. աշխարհ:

Զ Ղ Զ Ո Ի Մ

(Օր Մը Վերջը)

Երէկ երբ պաղ քրտանց մէջ
 Յուրտ մըրափ մը կ'առնէի,
 Զոյգ մը վաղից ել եւ էջ
 Այտերուս վրայ այրէի,
 Վերայ ճակտիս իմ մահու
 Դալկութիւն մը պըլպլար,
 Վերայ հոգւոցս սիրարկու,
 Անկաւ շունչ մօրս որ կուլար...
 Բացի աչերս խոնջած,
 Դժոյն արտօսը տեսի'...
 Համբոյրն յերեսս հանգչած
 Սուրբ յիշատակ մի վերջի...:
 Յոր մայրս անհռ'ւն ցաւ մ'ունէր
 Այն սեւ ցաւը ե'ս էի...
 Ա'հ, գըլուխը փոթորկեց...
 Այս սեւ հեղեղն դուրս տըլի...
 Ո'հ, ներէ' ինձ, Աստուած իմ,
 Մօրըս արտօսը տեսի'...:

1871

ԶՆԷ ՊԱՇՏԵՄ

Հառազայթի ու վարդի
 Փթթումներով վեհապանծ
 Ես չը սիրեմ սա դէմքը
 Սիրոյ ժպտով մը օծած:

Ես չը սիրեմ երբ կոյսի մ'
 Աչերը գ'իս բուրվառնն'
 Զերթ հուր ամպոց գոյգ մը հիւս
 Յօնիցը տակ մեղմօրէն:

Դիսաստղի պէս հերարձակ'
 Ես չը սիրեմ սա վընիտ
 Կոյսն' ոյր դէմքէն կը փթթին
 Լուսնի դալուկն ու ժըպիտ:

Զ Ղ Զ Ո Ւ Մ

(Օր Մը Վերջը)

Երէկ երբ պաղ քրտանց մէջ
Սեւ մըրափ մը կ'առնէի,
Եւ թօշնած գոյգ մը վարդեր
Այտերուս վրայ⁽¹⁾ կ'այրէի,
Անշուշտ ֆակտիս վրայ մահու
Դալկութիւն մը կը պլպլար,⁽²⁾
Եւ մահու թռիչ մ'ունէի,
Լըսեցի⁽³⁾ մօրս հեծեծում...
Բացի աչերըս⁽⁴⁾ խոնջած,
Մօրըս արտօսը⁽⁵⁾ տեսի'...
Ո՛հ, ճշմարիտ գորովի
Մարգարիտներ սուտ⁽⁶⁾ ու կեղծ...:
Մայրըս անհո՛ւն ցաւ մ'ունէր,
Այն սեւ ցաւը ե՛ս էի...
Ա՛հ, զըլուխըս փոթորկեց...
Այս սեւ հեղեղն տըւի դուրս...
Ո՛հ, ճերէ՛ ինձ, Աստուած իմ,
Մօրըս արտօսը տեսի'...:

1871

(1) էճա. վըրայ: (2) էճա. պըլպըր: (3) էճա. Լ-եցի: (4) էճա. աչերս: (5) էճա. արտօսը: (6) էճա. լսյծ:

ԶՆԷ ՊԱՇՏԵՄ

Հառագայթի ու վարդի
Փթթումներով⁽¹⁾ վեհապանծ՝
Ես չը սիրեմ սա դէմքը
Սիրոյ ժպտով մը օծած:

Ես չը սիրեմ երբ կոյսի մ'
Աչերը⁽²⁾ գ'իս բուրվառեն՝
Զերթ հուր ամպոց գոյգ մը հիւս
Յօնիցը տակ մեղմօրէն:

Գիսաստղի պէս հերարձակ՝
Ես չը սիրեմ սա վընիտ
Կոյսն՝ ոյր դէմքէն կը փթթի⁽³⁾
Լուսնի դալուկն ու ժըպիտ:

(1) էճա. փթթումներով: (2) էճա. երբ կուտի/Մ'աչերը (3) էճա. կը փթթի:

Ես չը սիրեմ՝ հանդիպիմ
 Երբ կոյսի մը հեզանագ,
 Որ եդեմ մը կը բուրէ,
 Վառէ երկինք մը երագ:

Ես չը սիրեմ սա կայայտ
 Զոյգ մ'երկինքերն գինովցած՝
 Ոյր մէկուն մէջ պաշտի նա
 Եւ միւսին մէջ ալ Աստուած:

Ես չը սիրեմ սա օտաք
 Ժըպիտները յուսաշող՝
 Որք ծաղիկներ են սուտ սոսկ
 Սրտի անդունդը ծածկող:

Ես կը պաշտեմ գ'իմ Պիստոս,
 Ինձ կը բաւէ իր սրտին
 Մէկ հառագայթը միայն,
 Եւ մէկ վարդն իր ժըպիտին:

Թէեւ սեւ աչքն հեղեղեն
 Անթիւ աստեղց միշտ բոյներ՝
 Իր սեւ յօնից շուֆին տակ՝
 Զ'որս ութ օրն է նա գըծեր:

Լուսինը ո՛չ ներս վարքն՝
 Եւ ոչ ալ վարդը ունի
 Հառագայթումը ներս,
 Հառագայթո՛ւմ սիրողի:

Ես դողդողամ իր վըրայ,
 Նէ իմ վըրայ գորովի,
 Իսկ թէ մոռնա՛յ գ'իս օր մը...
 Ա՛հ, այն օրը քա՛ր կտրի...:

1871

Ես չը սիրեմ՝ հանդիպիմ
Երբ կոյսի⁽⁴⁾ մը հեգանազ՝
Որ եղեմ մը կը բուրէ,
Կ'վառէ⁽⁵⁾ երկինք մը երազ:

Ես չը սիրեմ սա կապոյտ
Ջոյգ մ'երկինքն գինովցած՝
Ոյր մէկուն մէջ պաշտի նա
Եւ միւսին մէջ ալ Աստուած:

Ես չը սիրեմ սա օտար
Ժըպիտները յուսաշող՝
Որք ծաղիկներ եմ սուտ սոսկ
Սրտի⁽⁶⁾ անդունդը ծածկող:

Ես կը պաշտեմ գ'իմ Պիստոս,⁽⁷⁾
Ինձ կը բաւէ իր սրտին⁽⁸⁾
Մէկ ճառագայթը միայն,
Եւ մէկ վարզն իր ժըպիտին:⁽⁹⁾

Թէեւ սեւ աչքն հեղեղեն
Անթիւ աստեղց միշտ բոյլեր՝
Իր սեւ յօնից շուֆին տակ՝
Զ'որս ութ օրն է նա գրծեր:

Լուսինը ո՛չ ներա վարզն՝⁽¹⁰⁾
Եւ ոչ ալ վարդը ունի
Ճառագայթումը ներա,
Ճառագայթո՛ւմ սիրողի:

Ես կը դողդողամ իր վըրայ,
Նէ իմ վըրայ գորովի,
Իսկ քէ մոռնա՛յ գ'իս օր մը...
Ա՛հ, այն օրը քա՛ր կտրի...:⁽¹¹⁾

1871

(4) Էֆս. 400-ի: (5) Էֆս. Վառէ: (6) Էֆս. Սըրտի: (7) Էֆս. Պ... (Ծամօթութեան մը մէջ կը շեշտէ քէ բնագիրը այդպէս է: Ֆելէկեանի «սրբագրած» բնագիրը ունի «Պիստոս» Գուր-եանի իսկ ձեռագրով:) (8) Էֆս. սըրտին: (9) Էֆս. վարդը իր ժպիտին: (10) Էֆս. վարզն: (Ծամօթութեան մը մէջ «կը սրբագրէ» Ֆելէկեանի «վարձնը»: Սակայն իճէ ալ ընթերցման սխալի մէջ է, ապահովաբար արդիւնք՝ ճառեակին սքանչելի իմաստը ըմբռնած չըլլալու:) (11) Էֆս. կըտրի...:

ԿՈԿՈՆ-ԺԱՂԻԿԸ ԿՈՒՍԻՆ

Լուսավորութիւն՝ ւ՛նմարատ
Ձոյգ մ'աշխարհներ ես տեսի
Հառագայթից՝ բոյրերու
Եւ փափկութեան ու լոյսի:

Ո՛հ, չ'է՛ նոցա պէս անբիծ
Խտալական վեհ երկին,
Եթէ չ'ունին աստեղ բոյլ,
Ամպ ու կայծակ ալ չ'ունին:

Ո՛հ, յաւիտեան միշտ կոկոն
Կարծես գոյգ մը ծաղիկ եմ,
Բայց նըման կոյս սրտերու՝
Կարի փաղցըր կը բուրեն:

Ձեռք կարկառել ա'աշխարհաց
Ակնախըտիդ ու անտես՝
Յանդուգն բլլալ է լոկ քան
Զ'աշխարհակալն Արտաշէս:

Ի՞նչպէս արդեօք կերտեց նա
Լուսագունդներս այս դողդոջ,
Նա աշխարհի քան ըզկերտ՝
Մտածեց ոգի տալն կընդ:

Կը դողդողան իմ շուրթեր
Հըպիւ սիրոյ այդ խրոզով
Կոկոն-ծաղկանց՝ խամրելու՝
Արատելու երկիւղով:

Այլ որ շուրթերն յանդգնի
Հըպել հրաշից այդ լոյսէ,
Կ'երդնում յ'աշխարհն աստեղաց՝
Թէ նա դա՛ր մը կը ծըծէ:

1871

ԿՈԿՈՆ-ԺԱՂԻԿՔ ԿՈՅՍԻՆ⁽¹⁾

Լուսավերթիք՝ ւ՛նմարել⁽²⁾
Ձոյգ մ'աշխարհներ ես տեսի
Ճառագայթից՝ բոյրերու
Եւ փափկութեան ու լոյսի:

Ո՛հ, չ'է՛ նոցա պէս անբիծ⁽³⁾
Իտալական վեհ երկին,
Եթէ չ'ունին աստեղց բոյլ,
Ամպ աւ կայծակ ալ չ'ունին:

Ո՛հ, յաւիտեան միշտ կոկոն
Կարծես գոյգ մը ծաղիկ են,
Բայց նրման կոյս սրտերու՝⁽⁴⁾
Կարի փաղըր կը բուրեն:

Ձեռք կարկառել ա'աշխարհաց
Ակնախըտիդ աւ անտես՝
Յանդուզն ըլլալ է լոկ քան
Ձ'աշխարհակալն Արտաշէս:

Ի՞նչպէս արդեօք կերտեց Նա
Լուսագունդներս այս դոդդոջ,
Նա աշխարհի քան ըզկերտ՝
Մտածեց ոգի տալն կընոջ:

Կը դոդդոջան իմ շուրթեր
Հըպիլ սիրոյ այդ խրոռվ
Կոկոն-ծաղկանց՝ խամրելու՝
Արատելու երկիւղով:

Այլ որ շուրթերն⁽⁵⁾ յանդգնի
Հըպիլ հրաշից այդ լոյսէ,
Կ'երդնում յ'աշխարհն աստեղաց՝
Թէ մա դա՛ր մը կը ծըծէ:

1871

(1) Է՛հ. ԿՈՒՍԻՆ, (2) Է՛հ. Ն. անարեւ, (3) Է՛հ. ամբիծ, (4) Է՛հ. սրտերու:
(5) Է՛հ. Այլ ո՛ր շուրթըն, (Է՛հ. Էրման իմաստը փոխած է իբ կատարած «սրբագրութեամբ»:
Դուրեանի ըսելու զգածն է՝ «Այն որ կը յանդգնի իբ շրթունքները հոգել լոյսէ այդ հրաշքնե-
րուն...» եւայլն: Մինչդեռ Է՛հ. Էրման կը վերածէ հետեւեալին. «Այլ ո՛ր շրթունքը որ
յանդգնի հոգել լոյսէ այդ հրաշքներուն...» եւայլն:)

ՍԵՒԻ, ՍԵՒԻ

Երբեմն հոգիս աստղի մը բոց
 Եւ քիթեռնի մ'ունէր քեւեր.
 Վերջալոյսի նըման ամպոց
 Երագներ՝ հո՛ւր մակատս վառէր:

Արդ սառոյցներ դառն արտօսքի
 Կը փարանան կուրծիս ներքեւ,
 Եւ բարդօք ամպոց սեւաթորմի
 Կ'ուզեն խեղդել սիրտս ու արեւ:

Հազիւ ֆանի մ'օրերն կեանքիս
 Ոսկեզօծեց իմ բախդը վատ՝
 Որոնք եղան լոկ ռվասիս
 Մեղմուդ կեանքից դառն անապատ:

Մենամայի օրեր ցըվերջ
 Երբեմն՝ հովտի ծաղկանց լ'երկնի
 Ձիւնափըթիթ ամպերուն մէջ,
 Կեանքի մըրուրն ես քափէի:

Ծըծէի սէ՛ր, ծըծէի կեա՛նք,
 Մինչ վերջալոյսն կը հրրահրէր,
 «Մնաս բարովի» սա կարմրորակ՝
 Տըխուր կըրակ լ'երկնի բոցեր:

Ունէի ես երբեմն առատ
 Վարդեր՝ առատ աստղեր նոյնպէս,
 Հակատագիրս սեւ տեսաւ շա՛տ,
 Բրցուց, փաղեց գ'անոնք սրտէս:

Ունէի ես իմ սիրուհին,
 Որոյ քէպէտ աչքն էին սեւ,
 Սակայն սրգալ չը գիտէին...
 Հրեշտակ մ'էր նէ, հրեշտակ անքեւ:

ՍԵՒ, ՍԵՒ⁽¹⁾

Երբեմն հոգիս աստղի մը բոց
Եւ թիթեռնի մ'ունէր թեւեր.
Վերջալոյսի⁽²⁾ նըման ամպոց
Երազներ հո՛ւր նակատս վառէր:⁽³⁾

Արդ սառոյցներ դառն արտօսքի
Կը փարանան կուրծիս ներքեւ,
Եւ բարդօք ամպոց սեւաթորմի
Կ'ուզեն խեղդել սիրտս ու արեւ:

Հագիւ ֆանի մ'օրերն⁽⁴⁾ կեանքիս
Ոսկեգոծեց իմ բախտը⁽⁵⁾ վատ՝
Որո՛նք⁽⁶⁾ եղան լոկ ովսսիս⁽⁷⁾
Մեղմուզ⁽⁸⁾ կեանքիս դառն անապատ:

Մեմանայի օրեր ցըվերջ
Երբեմն՝ հովտի ծաղկանց լ'երկնի⁽⁹⁾
Ձիւնափրփրօք ամպերուն մէջ,
Կեանքի⁽¹⁰⁾ մըրուրն ես թափէի:

Ծրծէի սէ՛ր, ծրծէի կեանք,
Մինչ վերջալոյսն կը հըրահերէր,⁽¹¹⁾
«Մնաս բարովի» սա կարմրորակ՝
Տըխուր կըրակ լ'երկնի⁽¹²⁾ բոցեր:

Ունէի ես երբեմն առատ
Վարդեր՝ առատ աստղեր նոյնպէս,
Հակատագիրս սեւ տեսաւ շա՛տ,⁽¹³⁾
Բրցուց, ֆաղեց գ'անոնք սրտէս:⁽¹⁴⁾

Ունէի ես իմ սիրուհին,
Որոյ թէպէտ աչքն էին սեւ,
Սակայն սրգալ չը գիտէին...
Հրեշտակ մ'էր նէ, հրեշտակ անթեւ:

(1) Է. Բ. ՍԵՒ ՍԵՒ (2) Է. Բ. Վերջալոյսի: (3) Է. Բ. Երազներ, հո՛ւր նակատս վառէր: (4) Է. Բ. մը օրերն: (5) Է. Բ. Բախտը: (6) Է. Բ. Որո՛նք: (7) Է. Բ. Նոյնը ամերածեշտ է այս պարագային: (8) Է. Բ. Ովսսիս: (9) Է. Բ. Մեղմուզ: (10) Է. Բ. հովտի, ծաղկանց լ'երկնի: (11) Է. Բ. Ձիւնափրփրօք ամպերուն մէջ: (12) Է. Բ. Տըխուր կըրակ լ'երկնի: (13) Է. Բ. Բակատագիրս սեւ տեսաւ շա՛տ: (14) Է. Բ. սրտէս:

Սեւ երագ մը օր մը դողդոջ
 Մ'ըղեց գ'իս սեւ փոսի մ'առջին,
 Ուր քար կտրած՝ սիրտ ի թնդոջ՝
 Դագաղի մ'աչքս յառած էին:

Աւա՛ղ ներս վարդֆն ու աստղերն
 Լուռ պիտի տար կուլ այն սեւ փոս,
 Ցուրտ համբոյր մը առի ճակտէն,
 Ներս վերջին ձօնն էր ավստ'ս:

Եւ լըսեցի յայնժամ՝ թի թի
 Սեւ սեւ հողեր կոշտ թնդեցին
 Տըխուր քօղֆին վըրայ փայտի...
 Դըժոխֆ մ'անէ՛ծֆ այն սեւ օրին:

Այն ցուրտ հողերն յ'իմ դատարկ սիրտ
 Լըցուցին, փոսն գոցելունն հետ՝
 Եւ այս աշխարհն ալ անժըպիտ
 Գոցեցին իմ առջեւ յաւէ՛տ...:

1871

ԱՌ ՄԱՅԻՍ

Ծաղիկներու մայրի՛կ դու կոյս՝
 Ո՞վ իմ Մայի՛ս ծաղկահանդերձ,
 Սա երփներանգ ծաղկօֆդ հանդերձ
 Է՞ր չը բերիր Ծաղիկն հոգւոյս:

Ո՛հ, միթէ կա՞յ այլ գրւարթուն
 Մայիս հոգւոյ Ծաղիկներու.
 — Նա փողփողէ վերեւ գլխու,—
 Մի դալկահար Մայիս անհուն:

1871

Սեւ երազ մը օր մը դողդոջ
Մըզեց գ'իս սե'ւ փոսի մ'առջին,
Ուր քար կտրած՝⁽¹⁵⁾ սիրտ ի թնդոջ՝⁽¹⁶⁾
Դագաղի մ'աչքս յառած էին:

Աւա՛ղ ներս վարդին ու աստղերն
Լուռ պիտի տար կուլ այն սեւ փոս,⁽¹⁷⁾
Ցուրտ համբոյր մը առի ճակտէն,
Ներս վերջին ձօնն էր ափսոս:

Եւ լըսեցի յայնժամ՝ թի թի
Սեւ սեւ հողեր կոշտ թնդեցին⁽¹⁸⁾
Տըխուր ֆօզին վըրայ փայտի...
Դըժոխք մ'անէծք այն սե'ւ օրին:

Այն ցուրտ հողերն յ'իմ դատարկ սիրտ
Լըցուցին, փոսն գոցելնուն հետ՝
Եւ այս աշխարհն ալ անժըպիտ
Գոցեցին իմ առջեւ յաւէտ...:

1871

(15) էֆս. կըտրած: (16) էֆս. թնդոջ: (17) էֆս. Լուռ՝ պիտի տար կուլ այն սեւ: փոս: (Աւելցուած բուքը իմաստի փոփոխութիւն յառաջացնելով, աստղերուն կը վերագրէ լուսինն մը, ինչ որ անընդունելի է: Փոսն է որ լուսինամբ կուլ պիտի տայ վարդերն ու աստղերը:) (18) էֆս. թնդեցին:

ԱՌ ՄԱՅԻՍ

Ծաղիկներու մայրի'կ դու կոյս՝
Ո'վ իմ Մայի'ս ծաղկահանդերձ,
Սա երփներանգ ծաղկօքդ հանդերձ
Է՞ր չը բերիք Ծաղիկն հոգւոյս:

Ո՛հ, միթէ կա՞յ այլ գրաբթուն⁽¹⁾
Մայիս հոգւոյ Ծաղիկներու-
— Նա փողփողէ վերեւ գլխու,—⁽²⁾
Մի դալկահար Մայիս անհուն:

1871

(1) էֆս. գրաբթուն: (2) էֆս. գլխու—:

(Շար. 3)

